ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

№ 16 № 16

3/ԷՊ(42.925)

Պրոլէտարնե՞ր բոլոր երկրների, միացէ՛ք.

Գ. ՀԱՅԿՈՒՆԻ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՊՐՈԼԷՏԱՐԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԱՐՄԷՆԻԱՅԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան
ՊՈՍՏԻՆ—1919.

A II/7700

Ցարան՝ Կենտրոն. Հայկական Կոմիսարիատի, Մոսկվա, Արմեանսկիյ փ., տ. 2

Типография Центрального Армянского Комиссариата. Москва, Армянск. п. 2

ЗКП1(47.925)
Հ-26

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՄԷՆԻԱՅԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ

I

Կապիտալիզմը տասնիններորդ դարու վերջին և քսաներորդ դարու սկզբներին հասաւ իր զարգացման գագաթնակէտին՝ իմպէրիալիզմին, որից սկսւում է բուրժուական աշխարհի անխուսափելի քայքայում-դահավիժումը։

Բուրժուական հասարակակարգի ներքին հակասութիւնները, կապիտալիստական պետութիւնների միջև գոյութիւն ունեցող շահերի հակամարտութիւնը՝ օր աւուր աճող սպառնալից միլիտարիզմով, տասնեակ տարիների ընթացքում պատրաստեցին և բորբոքեցին համաշխարհային իմպէրիալիստական պատերազմ-սպանդանոցը, որ վաղուց ի վեր զուշակուած էր յեղափոխական-սոցիալիստների կողմից։

Բուրժուական հասարակակարգի կազմալուծումը, իմպէրիալիստական հրէշային պատերազմի հասցրած անբուժելի հարուածները, հիմնիվեր ցնցեցին ու քայքայեցին սոցիալ-տնտեսական կեանքը ամբողջ աշխարհում, առաւելապէս աւելի յետամնաց երկրներում։

Տնտեսական քայքայումը, իմպէրիալիստական խորանի առաջ ընկած տասնեակ միլիօնաւոր մարդկային զոհերը, երկարատև պատերազմի հետևանքով առաջ եկած սովը, ցուրտը և էպիդէմիկ հիւանդութիւնները, յետագա դժոխային կեանքի սոսկալի ուրուականով,— այս ամենը՝ աւելի ու աւելի

սրեցին բուրժուազիայի և պրոլետարիատի միջև գոյութիւն ունեցող դասակարգային պայքարը, խիստ հանդիսացան ու համարձակ ապարդեղ հանեցին բանւոր դասակարգի հերոսական կռիւը։

Կռի՜ւ, վերջնական ու վճռական, որ անձնուէր տանում են աշխատաւոր դասակարգերը մարդկութեան թշնամիների դէմ, սոցիալիստական յեղափոխութեամբ, որ մղում է մեզ յաղթական դէպի կոմունիզմի երանելի աշխարհը։

Համաշխարհային սոցիալիստական յեղափոխութեան տանդարդ՝ հոկտեմբերեան պրոլետարական յեղափոխութիւնը Ռուսաստանում, Խորհուրդների Իշխանութեան սխտեմով բաց արաւ նոր դարաշրջան մարդկութեան պատմութեան մէջ։

Խորհուրդների Իշխանութեան, Բանւորա-Գիւղացիական Կառավարութեան հաստատումով խորտակուեցին վերջնականապէս կապիտալիստական կարգերը Ռուսաստանում և պետական ամբողջ ապարատը, երկրի անտեսական ու քաղաքական կեանքով, անցաւ մինչ այդ շահագործուող դասակարգի՝ բանւորութեան ձեռքը։

Խորհուրդների իշխանութիւնը հաստատեց պրոլետարիատի դիկտատուրան՝ բանւորական մասսաների գերիշխանութիւնը։

Բոլշևիկեան շարժումը ցլուտ բոլոր երկրների հարաւածների տակ խորտակելով բուրժուազիայի գերիշխանութիւնը և նրա աւերակների վրա հիմնելով պրոլետարիատի դիկտատուրան, բանւոր դասակարգի ձեռքը տուց երկրի անտեսական կեանքն ու քաղաքական իշխանութիւնը և մղեց նրան դէպի հերոսական կռիւ մարդկութեան թշնամիների, համաշխարհային իմպերիալիզմի դէմ։

Համաշխարհային իմպերիալիզմի դէմ կեանքի և մահու կռիւում Խորհուրդների Իշխանութիւնը, ցրելով ցարական միլիտարիզմը, կոմունիստական կարգերին փոխանցման այս շրջա-

նում, ստեղծեց սոցիալիստական գոբք—Կարմիր Բանակը, որ ամենածանր պայմաններում, տարի ու կէս շարունակ, փայլուն յաղթանակներով մաքառում է «հայրենի» ու միջազգային հակայեղափոխականների, իմպէրիալիստների ոտից գլուխ սպառազինուած խոշորագոյն ուժերի դէմ։

Պրոլէտարական Կարմիր Բանակը իր անվեհեր և անձնուրաց կուռով այսօր սարսափ է ազդում Ազգութիւնների Լիգա—միջազգային իմպէրիալիստներին, և միաժամանակ հիացմունք պատճառում համշխարհային պրոլէտարիատին։

Սոցիալիստական Կարմիր Բանակի յաղթական քայլերդով և Խորհրդային Իշխանութեան նոր, ստեղծագործական, կոմունիստական աշխատանքով արդէն սթափւում, արթնանում, ոտքի՛ է ելնում համաշխարհային պրոլէտարիատը և հեղեղ շարքերով անձնուէր դիմում դէպի քաղաքացիական կրիւ.—

Դէպի Կոմունիզմի Յաղթանակը։

Բոլշևիկեան շարժում — պրոլէտարական յեղափոխութիւնը, իմպէրիալիստական աշխարհաւէր, աւազակային պատերազմի ընթացքում, վառել է մի անմար, հակայական հրդեհ, որի քաղաքացիական կուռի բոցերով այսօր բռնկում են բոլոր աշխարհամասերը, ուր այնպէս առատ կուտակուել էին պայթուցիկ նիւթերը, ուր այնչափ շատ խտացել էր մթնոլորդը։

Քաղաքացիական կուռի հրդեհը օրէ օր տարածւում ու լափում է ամբողջ երկրագունդը։

Արևմուտք և Արևելք վիթխարի բոցերով միախառնւում են իրար և կազմում սոցիալիստական, յեղափոխական շարժումների մի սքանչելի ներդաշնակութիւն։

Իմպէրիալիստական պատերազմի հրէիզ կապիտալիստական խաւերը, որոնք ամբողջ աշխարհը մարդկային սպանդանոց դարձրին, որոնք երեսուն միլիոն մարդկային զոհերի գահիճները հանդիսացան, այսօր գլուխները կորցրած ստանձնել են հրդեհաշէջների խղճալի դերը։

Անտանելի բուրժուազիան, որ վառեց ու բոլորեցնց իմպերիալիստական հրէշային պատերազմը, այժմ հաւաքել է բոլոր մութ ուժերը՝ մարելու կոմունիստական հրդեհը։

Իր նենգամիտ ձգտումներով նա կազմել է Ազգութիւնների Լիգան, միջազգային աւազակների պառնիկ դաշնակցութիւնը։

Պառնիկ դաշնակից պետութիւնները—իմպերիալիստ դահճապետների պոչին ամենուրեք քարշ են գալիս բոլոր սոցիալ—դաւաճան, սոցիալ—մարդասպան, սոցիալ—յուդաները։

Բանւոր դասակարգի երբեմնի «բարեկամ» այսօրւա դեղին—սոցիալիստները, անվերադարձ թողնելով աշխատաւոր մառսաներին և դաւաճանօրէն բուրժուազիայի կողմը անցած, նոյնպէս լարում են իրենց բոլոր ճիգերը, կասեցնելու սոցիալիստական յեղափոխութեան յաղթական արշաւը։

Իմպերիալիստների Ազգութիւնների Լիգայի կողքին սոցիալ—դահիճները բաց են արել ողորմելի շարշու կրպակը նեխուած, երկրորդ Ինտերնացիոնալի ախտուում, մարքսիստական կուսակցութիւնների թափթփուկ դեղին սոցիալիստներից, և լկտիօրէն կամենում են այժմ իրենց խարդախուած մրթերքներով թունաւորել բանւոր դասակարգի առողջ օրգանիզմը։

Դրանց բոլորին, իմպերիալիստների և դեղին սոցիալիստների դէմ ծառանում են անվախ բոլոր յեղափոխական սոցիալիստական կազմակերպութիւնները, Կոմունիստական կուսակցութիւնները։

Ազգութիւնների Լիգայի և դեղին երկրորդ Ինտերնացիոնալի հանդէպ կանգնել է խրոխտ, վստահ ու յաղթական Երրորդ, կարմիր Ինտերնացիոնալը, միջազգային Պրոլէտարական միութիւնը։

Համաշխարհային Բանւորական Միութեան՝ Ինտերնացիոնալի ոգեշունչ նշաններով վերջնական ու վճռական կռիւ—քաղաքացիական պայքարը սաստկանում է օրէ օր և նիւ-

բական պատերազմի դաշտը նետում պրոլետարական թարմ, նորանոր զնդեր։

Չկայ մի երկիր, ուր չի բորբոքել քաղաքացիական կռիվը։

Ձգտաք է լինի մի անկիւն, ուր չեն հառնելու պրոլետական քմրոստացման յաղթական ալիքները։

Կոմունիզմի արբազան հրդեհը անշուշտ լափում է ամբողջ աշխարհը։

Մարդկութեան երջանկութիւն՝ հրաշամանուկ կոմունիզմը պրոլետարական յեղափոխութեան բոցերից աշխարհ է գալիս քաղաքացիական կռիւի ժա՜նը, երկունքի ցաւերով։

Փոյթ չէ՛, որ մարդկութիւնը ապագայ փառաւոր կեանքի նախօրեակին պիտի կրէ երկունքի ցաւեր։

Անտառը կարելիս, թռչում են տաշեղները, ասում է ռուսական առածը։ Ամեն մի փոքրուած, ականաւոր վիրաւոր ակամա ցաւեր է պատճառում՝ մահաբեր ու ժահրոտ խոցերը կարելիս։

Կոմունիստական երկունքի ցաւերը մարդկութիւնը պիտի վերապրի գեղեցիկ յուշերով։ Իսկ յետագա սերունդների համար դրանք հրապուրիչ ու դիւթական երազանքներ են միայն։

Եւ բոլո՜ր նրանք, ովքեր տոգորուած են աշխատաւոր մասսաների, և դրա հետ միասին ամբողջ մարդկութեան վերջնական ազատագրման վսեմ գաղափարներով, ովքեր հաւատում են անսասան և համոզուած են անշուշտ նրա յաղթանակին,—

Պրոլետարական երկաթէ շարքերով դիմում են դէպի ներքական կռիւ ասպարէզ՝ երրորդ Ինտերնացիոնալի, Կոմունիստական Ինտերնացիոնալի Կարմիր Դրոշակի տակ։

Բոլո՜ր նրանք, որոնց կրծքում բաբախում է ազնիւ սիրտ, որոնք սիրում ու պաշտում են ժողովրդական հոծ մասսաներին, որոնք ծնուել են տառապանքներով ու զրկանքներով.

Բոլոր նրանք, որոնք անկեղծորեն նվիրել են իրենց կեանքը աշխատաւոր մասսաներին, այսօր կոմունիստական ահեղ շարքերով բարձրացրել են պրոլետարական ապստամբութեան կարմիր, անպարտելի դրօշը։

II.

Եւ արևելքի ժողովրդների մէջ առաջինը, Հոկտեմբերեան պրոլետարական յեղափոխութեան որպէս անմիջական արձագանք, 1917 թւի վերջերին, ամենադժոխային պայմաններում, փոքր Ասիայի, արևելքի այդ մանր ժողովրդների մէջ, հրապարակ եկաւ բաղաքացիական կռւի Կարմիր Դրօշակը ձեռքին, եղակի Կոմունիստական կազմակերպութիւն, Արմենիայի Բոլշևիկների Մրցութիւն—

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը։

Արմենիայի աշխատաւոր մասսաների համար այնչափ նշանակալից ու պատմական այդ օրերից ահա տարի ու կէս անց, ժամանակաւոր ու կարճատև պարտութիւններից յետոյ, այսօր, երբ Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնը աւելի զօրեղ, անշեղ ու անդրդեան վերսին ընթանում է յեղափոխական—ժարքսիստական բոլշևիկեան ուղիով, արժէ մի համառօտ, յետադարձ ակնարկ ձգել ու շեշտել այն ուղիղ ընթացքը, որով գնաց երիտասարդ կուսակցութիւնը հէնց առաջին օրերից, և որը անշուշտ բոլոսում էր համաշխարհային յեղափոխութեան ճշգրիտ ըմբռնումից։

Կասկած չկա, որ Արմենիայի Բոլշևիկեան դրուպպան, Ռուսաստանի Բոլշևիկեան Կուսակցութեան անդամների խմբակը, գնաց այն ուղիով, որ նախորոշել էր Ռուսաստանի Բոլշևիկեան Կուսակցութիւնը։ Նա փարեց այն հոբիզոնները, որ անպէտ լուսաւորել էր կարմիր բոցերով համաշխարհային սոցիալիստական յեղափոխութեան ականաւոր նեքկայացուցիչ և եղակի ղեկավար ընկեր Լենինը։

Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը ծնվեց Ռուսաստանի Բոլշևիկյան կուսակցության արգանդից, պրոլետարական յեղափոխության բոցերով։

Անդրկովկասի ամենածանր պայմաններում, երբ հակայեղափոխական մութ ուժերը, յանձին վրաց մենշեվիկների, հայ դաշնակցականների և թուրք մուսավաթիստների, լիտիրքին յաղթական քրքիջներ էին արձակում, յեղափոխական-մարքսիստական խօսքը հալածանքի ենթարկում, բանտերը լցնում բոլշևիկ քնկերներով, բանտորական միտինգները գնդակահարում, պատժիչ զորախմբեր ուղարկում յեղափոխականացած գիւղացիների դէմ, թնդանօթի և պուլեմեոնների կրակի ներքև դարձնելով գիւղերը,—այդպիսի դաժան պայմաններում, երբ բոլշևիկյան կազմակերպությունները ստիպված էին գաղտնի աշխատանք տանել—

Խիզախ ու անվեհեր պայքարի ելաւ Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը։

1918 թ. մարտի 10-ին Թիֆլիզում լոյս տեսաւ «Կարմիր Օրեր»-ը, ուր երիտասարդ կուսակցությունը հրապարակով յայտնում էր իր գաւանանքը որոշ և ամփոփ դէկլարացիայով։

Որովհետև Արմենիայի կոմունիստների անդրանիկ դէկլարացիան ունի պատմական խոշոր արժէք, մենք մի քանի կտոր վերստին կարձանագրենք այժմ, ընթերցողների լիշողությունի մէջ վերակենդանացնելու այն և կուսակցությանս նոր տնդամներին աւելի իրազեկ դարձնելու մեր անասան հաւատամքի հետ։

Հայաստանի ժողովրդներին ուղղելով սոցիալիստական կոչը.

«Պրոլետարներնե՞ր բոլոր երկրների՝ միացէ՛ք».

Դէկլարացիան ասում է.

...«Մեր օրերում դասակարգային կռիւը ստացել է աւելի բուռն և հսկայական չափեր»...

...«Նոգու և էլեքտրականութեան այս անօրինակ դարաշրջանում, կապիտալիզմի զարգացման հետ միասին բոլոր երկրներում, բոլոր ազգերի մէջ աւելի որոշ իրար դէմ կանգնեցին երկու անհաշտ բանակներ, երկու իրար դէմ մաքառնող դասակարգ՝ բուրժուազիան և պրոլետարիատը»։

«Բուրժուազիան, մարդկութեան հնչին փոքրամասնութիւնը, արտադրութեան բոլոր միջոցների տէրն ու անօրէնը բանւոր դասակարգի վարձու աշխատանքի, աշխատաւորութեան վերջին ծայր թշուառութեան և մանր ազգութիւնների քաղաքական ու անտեսական սարկացման վրա է հիմնել իր իշխանութիւնը։

«Պրոլետարիատը և ագրատ գիւղացիութիւնը, մարդկութեան բացարձակ մեծամասնութիւնը՝ կատաղի պայքար է մղում իր շահագործողների դէմ խլելու քաղաքական իշխանութիւնը և հաստատելու այնպիսի կարգեր, ուր չեն լինի դասակարգեր։

«Ուր արտադրութեան բոլոր միջոցները և գեանքի բարիքները կկազմեն ընդհանուրի սեփհականութիւնը, ուր ամէն մի անհատ կաշխատի իր ընդունակութիւնների համեմատ և կրաւարարի իր պէտքերի չափ»...

Իմպերիալիզմի քայքայումը և բանւոր դասակարգի հերոսական կռիւը անխուսափելիօրէն տանում են մարդկութիւնը դէպի վերջնական յաղթանակ, կոմունիստական աշխարհը։

Այս կարմիր օրերում, եղակի պայքարի մէջ, երբ պրոլետարական երկաթէ շարքերով կանգնած են ամենքը մէկի համար և մէկն ամենքի համար,—բոլոր երկրների, բոլոր ազգերի բանւորներն ու չքաւոր գիւղացիները դունդատուն հաւաքւած կոմունիստական կոնսակցութիւնների մէջ, կարմիր դրօշակի տակ,

«Ցայտնս են վերջին կռիւը մարդկութեան թշնամիներին։

«Ռուսաստանի հոկտեմբերեան յեղափոխութիւնը փառաւոր յաղթանակներով ամրապնդած Բանւորական, Գիւղացիա-

կան և Զինուորական միակ նպատակայարմար և անսասան իշխանութիւնը, դուրս է եկել իր ընդարձակ շրջաններից և ստանում է արդէն համաշխարհային պրոլէտարական յեղափոխութեան բնոյթ»։

«Ռուսաստանի այդ մեծ յեղափոխութիւնը յայտարարել է ի լուր աշխարհի բոլոր ազգութիւնների ինքնորոշման իրաւունքն ընդհանրապէս և Հայաստանի ինքնորոշումը մասնաւորապէս։

«Եւ մինչ մի կողմից իմպէրիալիստական կառավարութիւնները լարում են իրենց վերջին ուժերը, խեղդելու պրոլէտարական յեղափոխութիւնը արեան մէջ և իրենց գարշելի թաթը դնելու մանր ժողովրդների վրայ ընդհանրապէս և Հայաստանի վրայ մասնաւորապէս։

«Մինչ միւս կողմից հակայեղափոխական, կեղծ-սոցիալիստական կուսակցութիւնները Կովկասում բոլոր ժողովրդների համար ստեղծել են վտանգաւոր կացութիւն և դաւանանքէն ուզում են վանել Հայաստանի ժողովրդների իրաւունք—ճշմարիտ ազատութիւն.

«Հրազէնների որոսի և համաշխարհային յեղափոխութեան հրդեհի մէջ ծնունդ է առնում Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը, միջազգային սոցիալիստական բանւորական միութեան, Երրորդ Ինտէրնացիոնալի մի նոր մասնիկը։

«Լինելով միակ և հարազատ ներկայացուցիչը հարստահարուած չքաւոր ու արնաքամ ժողովրդների, Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը հաւաքում է իր շուրջը չքաւոր գիւղացիութիւնը, բանւորներին և նրանց բոլոր ազնիւ բարեկամներին։

«Բերելով իր հետ միջազգային պրոլէտարիատի ընկերական ողջոյնները, և ունենալով իր թիկունքում Ռուսաստանի յաղթական բանւորութեանը, որպէս զօրավիգ, որպէս յենարան, Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը ժող-

վրդական գանգուածների փրկութեան գործը տանելու է յեղափոխական, սոցիալիստական շարժումների և մասսական ըմբոստացումների ուղիով։

«Ցայտարարելով Հայաստանի ժողովրդներին մեր դաւանանքը, մենք չենք կասկածում, որ մեզն է ապագան»։

III

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը, կանգնած լինելով իմպերիալիստական պետութիւնների անխուսափելի կրախի և միջազգային պրոլետարական յեղափոխութեան աներկբա յաղթանակի սեսակէտի վրա, դեռ 1918 թ. մարտի սկզբին, առաջինը յայտարարեց իր անունը՝ Կոմունիստական։

Պարզ է, որ Անդրկովկասի հակայեղափոխական մթնոլորտում միակ այս փասար, մինչև իսկ, բաւական էր, որ բոլոր շովինիստական, դեղին սոցիալիստական, այսպէս կոչուած «սոցիալ-դեմոկրատական» խուլիգանների, դահիճների և դաւաճանների մոնմակը կատաղութեամբ յարձակուէր մեզ վրա և գործադրէր մեր դէմ բուրժուազիայի փորձուած ու ամենքին յայտնի միջոցները՝ սուտ, ծաղր, հայհոյանք ու հալածանք։

Պարզ էր հակայեղափոխական մութ ուժերի համար, որ նոր կուսակցութիւնը միանգամայն թշնամի է բոլոր կեղծ-սոցիալիստական կուսացութիւններին, որ Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը դնալու է Ռուսաստանի պրոլետարական յեղափոխութեան, միջազգային սոցիալիստական շարժման ուղիով։

Եւ այդ ըմբռնեցին նրանք առաջին իսկ օրերից։

Կոմունիզմի թշնամիները զգացին այն խոշոր վտանգը, որ սպառնում էր նրանց Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան կուի ասպարէզ եկնելով, ուստի շտապեցին թունաւոր սլաքներ ուղղել նրա դէմ։

Թողնելով մի կողմ հայ սոցիալ-խուլիգան դաշնակցականների վերաբերմունքը, յիշենք այն անպատկառ հայհոյանքները, որ թափեց մեր հասցէին վրաց մէնշևիզմը իր օրգան «Բարբա»-ի էջերում, և նրա հետ միասին հայ դիմադրող մէնշևիկների բերան «Պալքարը», որից արդէն մեռելային հոտ էր փչում։

Զարմանալի ընտրող և ուսանելի պէտք է լինի շատերի համար այդ միահամուռ արշաւանքը, որ սկսեցին առաջին իսկ օրերից Անդրկովկասի կադէտները, դաշնակցականները, հնչակեանները, սոց-դէմ. հայ կազմակերպութիւնը, մէնշևիկները՝ կոմունիստական կազմակերպութեան, Հայաստանի բոլշևիկների դէմ։

Եմուշի համար արժէ վրաց մէնշևիկների «Բարբա»-ից մէջ տեղ բերել մի փոքրիկ գոհար, որ նուիրուած է Արմենիայի կոմունիստներին։

«Մեզ չի զարմացնում այդ պարոնների լրբութիւնը...

«Բայց մենք չենք կարող մեր զարմանքը չարտայայտել նրանց անսահման յիմարութեան առթիւ։ Մթթէ՞ կարծում են, որ իրենց զզուելի և ստախօս դէմագոգիան ընդունակ է հայ ընթերցողի մէջ օրևէ բան առաջ բերել, բացի անարգանքից և արհամարհանքից դէպի նրանց»։

Մէնշևիկներին, դաշնակցականներին յարում է հայ բուրժուա-կղերականների բերան «Մշակը» 1918 թ. մարտին։

«Այդ ճանապարհը մեզ շատ լաւ ծանօթ է. դա Լենինի և Տրոցկու քարոզած միջոցն է...

«Եւ այսօր մեր դժբախտութեան ամենամեծ օրերին «Կարմիր Օրերը» առաջարկում է մասսաներին յեղափոխական և սոցիալիստական գիտակցութեան զալ և ընդոստանալ։ Որտե՞ղ, իհարկէ ոչ Թիւրքիայում, այլ Անդրկովկասում և մանաւանդ հայերի մէջ»։

«Այդ անգիտակցական և անպատասխանատու քարոզի հետևանքն այն կլինի, որ հայ զորքը վերջնականապէս կը կաղ-

մայուժի և թիւրքական զօրարանակի առաջ մեր երկրի գրաները կրացուեն...»

Անկասկած հայ բուրժուազիան սարսափելու հիմք ունէր։ Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան և նրա կենտրոնական օրգան «Կարմիր Օրերի» ուրուականը միայն բաւական էր՝ գիւղացիներ անելու նրանց։ Եւ նրանք իրենց հաշիւների մէջ չէին սխալուում, քանի որ հայ զօրքը հաղարնեբով, բանուորական և գիւղացիական խաւերը՝ խմբուում էին մեր կուսակցութեան շուրջը, բայց ոչ թէ նրա համար, որ երկրի գաներր բացէին թիւրքական հորդաների առաջ, այլ ասպարէին՝ ինչպէս հայ բուրժուազիայի, այնպէս էլ թիւրք փաշաների և վրաց կնեազների անարգ լուծը և հաստատէին Բանուորա գիւղացիական կառավարութիւն, Խորհուրդների Իշխանութիւնը, դիմելու դէպի կոմունիզմ։

Ահա թէ ո՞ւր էր թռչած շան գլուխը և թէ ինչո՞ւ էր մէնշևիզմը կատաղած յարձակուում, փակում մեր ասպարէզը, մեր թերթերը, արգելում մինչև իսկ «Կոմունիստական Մանիֆէստի» ասպարանից լոյս աշխարհ բերելը։

Ի հարկէ սոցիալ-դաշնակներն իր ժամանակին ստացել են արժանի պատասխանը. դէռ 18 թ. մայիսի 16-ին «Կարմիր Օրերի» № 3-ում կարդում ենք.

«Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան և նրա օրգան «Կարմիր Օրերի» երևան գալը միայն բաւական էր, որ մեծ վայնասուն բարձրացնէր սոցիալ-խուլիգանների բանակում, որոնք իրենց մութ գործերը առաջ մղելու համար, մասսաների գիտակցութիւնը մոլորեցնելով, սիրում են իրենց եակատին սոցիալիստ և ինտերնացիոնալիստ բառերը կրել...»

Դիմելով նրանց, թերթը շարունակում է՝

«...Ի՞նչպէս կարող էք հանդուրժել, որ «Կարմիր Օրերը» սոցիալիզմի և ինտերնացիոնալիզմի ճշմարիտ դաղափարները տարածեն Հայաստանի աշխատաւոր մասսաների մէջ։

«... Ա՜խ, դուք սպասում էք, որ գերմանական իմպէ-

բիալիզմը խեղդի ռուսական յեղափոխութիւնը և դուք այդ գնով ձեռք մեկնեք Կորնիլովներին, Ալեքսեևներին, Պուրիշկեվիչներին և գերմանական իւնկերներին։

«... Բայց այնժամանակ էլ դուք չէք կարող շահագործել սոցիալ-դեմոկրատ անունը, որովհետև իւնկերները չեն թողնի ձեզ այդպիսի լիմար կատակներ անել.

«Բայց իզուր են ձեր սպասելիքները։

«Աւելի լաւ է,—հրապարակ իջէք ձեր համապատասխան անունով։

«Վրացիների պարիսիոտական կուսակցութիւն։

«Այն ժամանակ աւելի անպատկառ կարող էք հայհոյել ժողովրդական Կոմիսարների Խորհրդին...»։

Եւ Հայաստանի բոլշևիկների միութիւնը մի կողմ թողեց սոցիալ-դեմոկրատ սխալ ու անարգուած անունը, և չսպասելով Ռուսաստանի բոլշևիկեան Կուսակցութեան համագումարին, շիտակ ու համարձակ դէն շպրտեց «կեղտոտ շորերը և հագաւ մաքուր սպիտակեղէն»... անուանելով իր կուսակցութիւնը՝ կոմունիստական։

Աշխատաւոր խաւերը զգացին և ապա ընդունեցին ու գնահատեցին երիտասարդ կուսակցութեան ուղիղ և խիզախ երթը, հագարաւոր շուրթերից կանչելով,

«Կեցցէ՞ Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը»։

Խրախուսուած մասսաների դէպի մեր կուսակցութիւնը տաժաժ սիրով, և բուրժուական - նացիոնալիստական - մենշևիկեան բանակի յարձակումներն ու հալածանքներն ընդունելով դրական, որ մեր կուսակցութիւնը անշեղ ընթանում է յեղափոխական մարքսիզմի ուղիով և անշուշտ պիտի յաղթանակի—

Այսօր մենք ցաւով ստիպուած ենք խոստովանել, որ գրանուեց նաև մի հայ բոլշևիկ, որը Ռուսաստանի Բոլշևիկեան կուսակցութեան Կովկասեան Երկր. Կոմիտէի հայկական օրգան

«Բանաւոր» էջերում դրաւոր ժողովի ենթարկեց մեր կուսակցութեան՝ «Մաւնիստական» անուն, համաձայն այդ Մասիս սարի ժէրից եկածների հանձարի արդիւնք...

Ի հարկէ մէկ-երկու շաբաթ յետոյ հեռագրները հաղորդեցին, որ Ռուսաստանի սոց-դէմ. բանւոր. (բոլշևիկեան) կուսակցութեան հանդուցեալն ընդունել է «Կոմունիստական» անունը և այդ փաստը կոմունիզմի, Կոմունիստական Ինտերնացիոնալի դէմ մեղանչող ընկերոջ համար փառաւոր ապտակ էր, Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան լուութեան հանդէպ, սակայն այժմ, պատմական անցքերը լիշելիս, մենք ստիպուած ենք արձանագրել նաև այս տխուր փաստը։

IV

Դէպի երրորդ, Կոմունիստական Ինտերնացիոնալը դիմող սոցիալիստական կուսակցութիւնների շարքում, Ռուսաստանի Բոլշևիկեան կուսակցութիւնից անմիջականօրէն առաջ եկած Արմէնիայի Կոմունիստական Կուսակցութիւնը պէտք է տանէր ուղիղ, փառական ու անհանդուրժելի դիծ միւս բոլոր դեղին-սոցիալիստական և ազգայնական կուսակցութիւնների վերաբերմամբ։

Եւ Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը, առաջին իսկ օրերից, իր մայր Ռուսաստանի բոլշևիկեան կուսակցութեան անշեղ ուղիով ամենասուր և անխնա քննադատութեան է ենթարկել Անդրկովկասի ու Հայաստանի իրականութեան մէջ գործող կուսակցութիւններին, խզելով իր յարաբերութիւնները նրանց բոլորի հետ, բաղմաթիւ փաստերով հրապարակ է հանել նրանց դաւաճանութիւնները բանւոր դասակարգի հանդէպ և նրաց վարած լիտի ու ազգասէր քաղաքականութիւնը Կովկասի բազմացեղ ժողովրդների դիմաց։

Կենտրոնական օրգան «Կարմիր Օրերի» առաջին իսկ հա-

մարում յայտարարելով, որ Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը 3-րդ Ինտերնացիոնալի մի նոր մասնիկն է, Արմենիայի բոլշևիկները անսայթաք տարել են բոլշևիկեան գիծը կարմիր թելի պէս բոլոր հարցերում, և ձգտել են անդադար շեշտել այն խոր ու մեծ անջրպետը, որ գոյութիւն ունի Կոմունիստական Կուսակցութեան և փտած, դեղին 2-րդ Ինտերնացիոնալի թափթփուկ միւս սոցիալ դաւաճան կուսակցութիւնների միջև։

Եւ այդ գիծը Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնը տարել է այն խոր գիտակցութեամբ, որ կոմունիստական յեղափոխութեան յաղթանակի համար աւելի վտանգաւոր ու վնասակար հանդիսանում են սոցիալիստական փիլիսոփաներ հագած կուսակցութիւնները, որոնց դէմ պէտք է մաքառել ամենաֆեռական կերպով, զարկ տալու աշխատաւոր մասսաների գիտակցութեանը և հանելու նրանց ճշմարիտ յեղափոխական ուղիի վրա։

Եւ թւում է, ու պնդում ենք անվերապահ, որ այլ դիծ էլ չէր կարող տանել երիտասարդ բոլշևիկական կուսակցութիւնը, այլապէս նա միանգամ ընդ միշտ կը դադարէր Կոմունիստական լինելուց, նա խաչ կը քաշէր իր վրա, և քարշ կը տար մի եղկելի, ողորմելի կացութիւն, հեռու աշխատաւոր խաւերից, յեղափոխական մասսաների անարգանքին ու ծաղրին ենթակա, ճիշտ այնպէս, ինչպէս մինչև օրս շարունակում են պահպանել իրենց խղճալի գոյութիւնը այսպէս կոչուած «սոցիալ-դէմոկրատ հնչակեան» և «սոցիալ-դէմոկրատ հայ» կուսակցութիւնները, հատ ու փոր խմբակներ, որոնք անվերադարձ շեղելով մաքսիստական ուղիից, զուրկ յեղափոխական մասսայական կազմակերպութիւն լինելու ամեն մի բարեմասնութիւնից, ներկայացրել են իրենցից դիտիների շուքարան, որոնցից «կենդանութեան» նշաններ ցոյց տուողները «հետևողականորէն» անցել են բուրժուազիայի բանակը և ամենասաստ արշաւանք սկսել բանւորական շարժման դէմ։

A 7700

Փաստորէն Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնն իր դէմ չի ունեցել, որպէս մասսայական, կազմակերպուած ուժերի, լիշեալ երկու «կուսակցութիւններին», որոնց, մեր խորին համոզմունքով, պէտք է համարել պատմութեան արխիվն անցած։

Թողնենք նրանց իրենց մեռելները թաղելու... իսկ Իշխանականներին, հայ բուրժուազիայի և կղերականութեան ալղ ամամօթ վարձկաններին, յեղափոխական հեղեղը կը սրբի հիմովին։

Ուշագրաւ է սակայն Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան առաջին խօսքը՝ 1918 թ. մարտի 27 ին «Կարմիր Օրեր» № 12-ի էջերում, ուր մեր օրգանը բանակուելով մանելով «Բանւոր» կոչուած թերթուկի հետ, «Գրական ազբակոյտ» բաժնում ասում է.

«Բազում սկսել է նորից իր աննախանձելի գոյութիւնը քարշ տալ հայ սոցիալ-կադէտների շարաթաթերթը «Բանւոր» անունով։

Մենք քանիցս շեշտել ենք, որ բանւորութեան և չքաւոր գիւղացիութեան թշնամիները սոցիալիզմի վատթար դաւաճանները, աշխատաւոր մասսաներին մոլորեցնելու համար, անպատկառ կերպով իրենց ճակատին նոյնպէս կրում են «սոցիալ-դէմոկրատ» անունը։

«Ալդարիսների շարքին են պատկանում գրական աղբակոյտի ծէջ թաղուած ամենքին ծանօթ Իշխանեանները։

«Թէ ինչ պէտք է լինի լիշեալ հայ սոցիալ-խուլիգանների օրգան «Բանւոր» կոչուածը, բաւական է լիշել հայ բուրժուա-կղերականների թերթ «Մշակ» լոյսը տեսնելուց շաբաթած զոմբիսաներն ու ողջոյններն Իշխանեանների հասցէին...

... «Մշակը» կարող է ցնծալ, այդ միանդամայն հասկանալի է. ինչ փոյթ, թէ Իշխանեաններն իրենց ճակատին կրում են «սոցիալ-դէմոկրատ» անունը։ «Մշակը» նոյնպէս «սոցիալիստ» է, բայց չաւուրս... «Մշակի» դեկավարները շա՞տ

լաւ գիտեն, որ Իշխանեանների «Բանւորը» այդ իրենց սեփական բաստանն է, և ինչո՞ւ չողջունել...

«Բայց հայ բանւորը և չքաւոր գիւղացին անարգանքով երես կը դարձնեն սոցիալ-կադէտների գրական ապրակոյտից։

«Հայ բուրժուազիային խունկ ծխող, նրանց պնակները (ամանները) լիզող Իշխանեանները պիտի հայհոյեն անսակաց բոլշեւիկներին։

...«Ինչո՞ւ են Իշխանեանները կրկին հայհոյում, որ կոմունիստ բանւորները կատաղի կռիւ են մղում մարդկութեան թշնամիների դէմ։ Ինչո՞ւ է վրդովւում նրանց ճահիճը։

. «Որովհետև դերմանական բանակներում կան նոյնպէս Իշխանեանների բարեկամ ռուս կօնիլովականներ, ռուս կադէտներ, սոցիալ-խուլիգաններ։

«Մենք մի բանում միայն համաձայն կը լինենք «Բանւորի» բողոքի հետ, եթէ բանւորական զինուած խմբերի հետ կռիւ դաշտ ուղարկէին նաև հայ պատուտխոս սոցիալ-դէդէրատիրներին...

«Այդ այդպէս էլ կը լինէր, եթէ Խորհուրդների Իշխանութիւնը հաստատուէր նաև Անդրկովկասում։

«Հասկանալի է ուրեմն, թէ ինչո՞ւ սոցիալիստական կռիւ դասալիք Իշխանեան մարդուկներն այնպէս եռանդուն խրում են իրենց դունչը ապրակոյտի մէջ։

«Աշխատաւոր դասակարգերի համար յաւիտեան անարգուած են հայ սոցիալ-պնակալիզներն ու սոցիալ-դէդէրատիրները»։

V.

Թոյլ, անկենդան սոցիալ-հողմամար կուսակցութիւնների դէմ չէր գլխաւորապէս այն վճռական կռիւը, որ կեանքի և մահու գնով մղում էր Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը։

Նա իր հարուածներն անվրէպ ուղղել էր սոցիալ-գաւա-

ման, սոցիալ-աւագակ, սոցիալ-մարդասպան՝ մէնշևիկների, դաշնակցականների և ժուռափաթիստների դէմ, որոնք բթացնելով ժողովրդական մասսաների գիտակցութիւնը, բորբոքելով ազգայնական ամենամութ ինստինկտները, եղբայրական ժողովուրդները ոտից գլուխ զինել էին իրար դէմ և միաժամանակ բաղմելով Անդրկովկասեան սէյմում,—վրաց գնեազնների, Հայ բուրժուաների, թուրք բէկերի ժամանակաւոր «սորբաման» դաշնակցութիւնով, — աշխատում էին խեղդել յեղափոխական սոցիալիստական շարժումը, ընկճել բոլշևիկեան յեղափոխութիւնը, որ ապա պատառ-պատառ եղած Անդրկովկասում և Հայաստանում իշխէին զատ զատ, և փոխադարձ դաւեր նիւթէին իրար դէմ...

Եւ առանց չափազանցելու պէտք է խոստովանել, որ Արմէնիայի բոլշևիկների միութիւնը, ուժերների դէմ մղած անհաւասար կռուում, Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան Անդրկովկասեան կազմակերպութեան հետ միասին ընթացել է խրախ, ամենաեռուն ոգևորութեամբ, մինչև վերջ հաւատարիմ պրոլետարական յեղափոխութեանը։

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան կենտրոնական օրգան «Կարմիր Օրերի» և ապա «Կարմիր Դրոշակի» 1918 թ. բոլոր համարներում կը կարդաք ամենասուր քննադատութիւններ, համարձակ մերկացումներ և մինչև իսկ բացարձակ ապստամբութեան կոչեր այնպիսի ժամանակ, երբ կոմունիստական խօսքն անգամ հայածանքի էր ենթարկուում և Ռուսաստանի կազմակերպութեան բոլշևիկ ընկերները ստիպուած էին ստորերկրեա նկուղները մտնել Անդրկովկասում։

Ի պատիւ Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան պիտի շեշտել, որ նա մինչև վերջ, բոլշևիկների դէմ գործադրած բոլոր բռնութիւններից ու հալածանքներից յետոյ էլ, շարունակել է անվեհեր, հերոսական պայքարը, յենուած իր շուրջը խմբուած հաւատարիմ զնդերի վրա և շա՜տ անգամներ

ձեռքով միայնակ այդ անհաւասար ու օրհասական կռիւնե-
բում...

Ապագա պատմագիրը մանրամասն կարձանագրէ այդ ա-
մենը. մենք ասենք մի քանի նմուշներ, որոնք Անդրկովկասի
ու Հայաստանի կոմունիստական շարժման տեսակէտից խոշոր
արժէք են ներկայացնում։

Այսպէս, օրինակ, 1918 թ. մարտի 16-ին «Կարմիր Օրե-
բի» № 3-ի «Դէպի մասսայական ըմբոստացումն» առաջնոր-
դողում կարդում ենք.

«... Ցիշեցէք այն դաւադրութիւնները, որ կատարւում
են կուլիսների յետև, պալատների մէջ... քննեցէք այն ճառերի
իմաստը, որ այնպէս ցինիկ հնչում են «հանդիսաւոր» օրերին.
աւելացրէք դրանց վրա ազգամիջեան լարւած և ամենաթշնա-
մական լարաբերութիւնները, երբ բուն աշխատաւոր դասերն
սպառադինւած, կանգնած են իրար դէմ, և բաւական է մի
կայծ, որ բորբոքի մարդկային կրքերի մի հրդեհ, ալրելու իր
մեջ ամենքին, կրատանաք մի զարհուրելի և ալանդակ պատ-
կեր, որ կոմկասեան հանրապետութիւն կոչւելու «արժանիքնե-
ունի։

— «Ովքե՞ր են մեղաւոր այս ստեղծւած դրութեան
համար։

... «Վրաց մենշեւիկ սոցիալ-պատրիոտները, դրոշմելով ի-
բենց ճակատին սոցիալ-դեմոկրատ անունը և մերնացնելով մաս-
սաների դիտակցութիւնը, սրբազան դաշն էին կապում Թիւրք
ազալար-բէկերի և հայ բուրժուազիայի հետ, չինական պա-
բիսպներ կառուցանելու Ռուսաստանի բանուորա-գիւղացիա-
կան յեղափոխութեան դէմ։

...«Կովկասի բոլոր սոցիալ-շովինիստները, որոնք ամբողջ
մի տարի, ցարիզմի խորտակումից յետոյ, վարեցին իշխանու-
թիւնը, անոթիներին կովկասեան ժողովուրդների բողոքը, ե-
բեւ դարձնելով միմիայն յեղափոխական զորձից, զորկ ուին
հակայեղափոխութեանը թիկունքում, առաջ բերին այն չա-

բամիա ուժերը, որոնք օսմանեան խաւար հրոսակախմբերով ներս են խուժում Նակատից։

«Եւ զարմանալի չէ, որ օրհասական այս կարծանուն-ների հետ քայքայւում է «սրբազան դաշը», քայքայւում է «լեզափոխական ֆրանսը», կազմալուծւում են «ազգային գնդերը» և տեղի տալիս արնախում աւազակախմբերի առաջ։

«Այս Նակատագրական օրերին, երբ Կոմիտասի աշխատաւոր դասակարգերի վրա կապարի ծանրութեամբ իջել է կոշմարը և Հայաստանի ժողովուրդները ենթակա են բնաջնջման սպառնալիքին...

...«Մենք ամենայն լքջութեամբ և պարտքի խոր համոզմունքով դիմում ենք Հայաստանի ժողովրդների ինքնագիտակցութեանը և կոչ ենք անում նրանց խտացնել եռշմարտ լեզափոխական շարքերը, բռնել ընդհանուր մաքառման ըմբոստացման ուղին»։

Մի այլ յօդուածագիր՝ «Թռուցիկ նկատողութիւններ»-ում հարւածելով դաշնակցութեանը՝ նրա աջ թևից սկսած մինչև ձախակողմը, գրում է.

...«Տորիզոն», «Աշխատաւոր», «Արև» և միւս բոլոր թերթերը, դրանց շարքում նաև Ամերիկայում հրատարակւող «Հայրենիքը»...

...Բուլարային որակի լրագրողներից յետ չմնացին, խաբեցին և մասսաներին մոլորեցրին»...

...«Եւ ականատես ենք (Գարմիր Օրեր» № 11), ինչպէս ազգայնական, կեղծ սոցիալիստական կառավարութիւնները «փրկում են հայրենիքը» փրկելով լեզափոխութիւնից։

...«Ցանուն «հայրենիքի փրկութեան» դիւցազունները թող հողի մասին չմտածեն։

...Գեներալ Նազարբեկովը վերականգնել է գինւորական «դիսցիպլինը» հայկական զօրամասերում և գաւառներում...

...«Կեցցէ դաշանակը», ահա «հայրենիքի փրկութեան միջոցը, որ գտնւած է այժմ...

...«Հայրենիքը փրկուում է, կորչի յեղափոխութիւնը». այս նշանաբանի շուրջը մի անօրինակելի եղբայրական սերտ դաշնակցութիւն է հաստատուած բուրժուազիայի, դաշնակցութեան, մենշևիզմի և նման ռէնէգատ կուսակցութիւնների միջև։

«Եւ հակայեղափոխութիւնը ցնծում է»։

Այնուհետև «Կարմիր Օրերը» № 12-ի մէջ քննադատութեան ենթարկելով սեղական իշխանութիւնների սանկութիւնն ու ապիկարութիւնը, իշխանութիւնների, որոնք կազմել են բուրժուա-բէկական էլէմէնտներից՝ մենշևիկների, դաշնակցականների և մուսաֆաթիստների ջանքերով, ասում է.

...«Իւրաքանչիւր անգամ նոր իշխանութիւն կազմելիս՝ մենք միշտ պարզել ենք մեր բացասական վերաբերմունքը դէպի նման իշխանութիւնները, միշտ մատնանշելով... որ իշխանութիւնը պէտք է կենտրոնանայ միմիայն յեղափոխութեան իսկական շարժիչ ու առաջ մղիչ ուժերի՝ բանուորութեան և չքաւոր գիւղացիութեան խորհուրդների ձեռքը։

...«Անդրկովկասեան սէյմի նորաթուխ կառավարութիւնն ևս դատապարտուած է իր նախորդների պէս անփառունակ մահուան. որովհետև նրա ներկայացրած դասակարգերը՝ բուրժուազիան և բէկութիւնը անխուսափելիօրէն կործանուելու են յաղթական պրոլէտարիատի յեղափոխական հուժկու հարուածների ներքոյ»։

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը, օր առաւ խառնելով իր շարքերը և շարունակելով նորանոր հարուածներ տալ, «Կարմիր օրերի» № 14-ի մամուլի բաժնում մերկացնում է.

«Անդրկովկասեան սէյմը, որ իրենից ներկայացնում է հակայեղափոխութեան բոյն, (մենշևիկեան պոռնիկ քաղաքականութեան մի վիժուածք) կազմել է Անդրկովկասի կառավարութիւնը»,

«Թէ ինչ իշխանութիւն է լինելու ազգային-նացիոնալիստներից և սոցիալ բէկերից կազմուած մինիստրութիւնը, շատ լաւ դիտեն բանւորն ու չքաւոր գիւղացին։

«Հասկացրէք է սակայն... որ սոցիալ-խուլիգանների բարեկամ էսէրներն այսօր հարձակուած են մենշևիկներին... ան կասու է անցել նրանց միջոցի... թանք էսէրների օրգան «Ջնամեա Ցրուդա»-ին։

«... Նրանք, ովքեր կասկած կարող են ներշնչել սեփական իրաւազրկուածութիւնների մասին, նրանք ովքեր գիմակրատական և սոցիալիստական լոզունգները պաշտպանելով, կարող են դրանել մասսաների համակրանքը—հեռացուած են։

«...Պետք է ձեռնարկել բոլշևիկներին։ Պետք մուսամաթը։

«Ահա ինչպիսի ճշմարտութիւններ են ասուում, ինչպիսի մերկացումներ են անուում իրար մասին երեկուա սրտակից դաշնակիցները, երբ նրանք ժողովրդից թաքնուած իրաւունքներ չեն կարողանում բաժանել իրար մէջ։

«Մոսկուայի աւազակների մէջ էլ այսպիսի ընդհարում ներ են տեղի ունենում, երբ կողոպուտը բաժանում են միմեանց մէջ։

«Էսէրներն ու մենշևիկներն իրար արժեն»...

«...Նոր իշխանութեան պատկերը շարունակում է «Գարմիր Օրեր»-ը, ասելի լրիւ և որոշ կը լինի, եթէ մէջ բերենք վրաց մենշևիկների պոչից կախ ընկած հայ սոցիալ-պատկառելիների օրգան «Պայքարի» վանսասանը.—

«Պարզուում է, որ Սադոխիի գեղջերի դեկավարները (Թուրք բէկերն ու մուսաֆիրներն են։ Ը.) դեռ մասին ճամբուսման և Հ.Հ.Դ. անդամներ կը ասեր։

«Սպասում ենք բէկերի բարեկամ հայ սոցիալ-մենշևիկների մերկացումներին... բայց...ի՞նչպէս կարող են «արդարադատութեան մինիստր Խան-խոյսկիները և «լուսաւորութեան մինիստր Ուսուլիբէկովներն աւազակային յարձակումներ կազմակերպել... «Պայքարը» այդ մասին դեռ հաշիւ կտա Մուսամաթին։

«Բայց եթէ, ո՞ սարսափ, մի փոքր հաւատանք «Պայ-

բարին», որ բէկերը և մուսաֆիրները թարան ու աւեր են կործանեցուցած, այն ժամանակ, թուում է, որ ընթերցողն իրաւունք ունի բռնել «Պայքարի» ականջներից և ասել.

— Է՞ բարեկամ—մի քիչ կանգ առ։ Այդպէս անամոթաբար մի՛ զրպարտիր բէկերին և Մուսաֆիրին... Արդարադատութեան կամ չարաչարութեան մինչեւարն էլ աւազակային շարժում գեկավարի՞...»

«Չէ՛, եղբայր Պայքար, մենք չենք հաւատում. կամ բէկերն ու մուսաֆիրները են գուզ մարդիկ, կամ բոլորդ էլ միևնոյն կաշի տէրն էք... միևնոյն ցեղից...

«Ինչպէս երևում է մենշևիկներն ու «մուսաֆիրը» չեն կարողացել թարանը սիրով բաժանել»։

Խեղճ բանւոր և գիւղացի, մի տե՛ս, թէ ինչքան շներ են թափւել գլխիդ։

VI

Հայաստանի Կոմունիստական կուսակցութիւնը միայն մերկացուցեալով չէր, որ հանդէս էր գալիս պրոլետարական յեղափոխութեան այս փոթորկալից շրջանում։ Նա խորապէս գիտակցում էր, որ դասակարգային անօրինակ, հզօր բաղխումների ժամանակ, բուրժուական-նացիոնալիստական-մենշևիկեան բլոկի դէմ պէտք էր ստեղծել ու հակադրել աշխատաւորական գիտակից ու կուռ բանակները և որ դրխաւորն է՝ մղել նրանց դէպի ակտիւ, անվեհեր պայքար, դէպի քաղաքացիական կռիւ։

Եւ այդ աւելի քան անհրաժեշտ էր ու հրամայողական պահանջ այնպիսի մի ժամանակ, երբ—

...«Մխենանց բղկոտոր, միմեանց հակառակ, նոյնիսկ թշնամի կուսակցութիւնների, մենշևիկների, դաշնակցականների, մուսաֆիրների և նոյն իսկ կադէտների բլոկը մի անօրինակ, չտեսնուած համաձայնութեամբ, իրենց կուսակցական թշնամանքն ու խռովութիւնները մի կողմ նետած, «եղբայ-

բական» ձեռք մեկնեցին իրար»... («Կարմիր Դրօշակ» 1918 թ. ապրիլի 4)։

Բանւոր դասակարգի մարմնոր յօշոտող, մարդակեր դասն—այդ բոլոնիների վոհմակը լարում էր իր վերջին ուժերը, խեղդելու պրոլետարական յեղափոխութիւնը։

Բոլշեւիկեան շարժումը դալիս էր սրբելու և տանելու մարդկութեան այդ բոլոր թափթփուկներին, որոնց թաթերը և դունչը միշտ թաղուած են եղել ճնշուած դասակարգերի անմեղ արեան մէջ։

Իրար դէմ յաւէտ մաքառող, իրար դէմ ամենասուր դաւեր նիւթող վերոյիշեալ նացիոնալիստական կուսակցութիւնների «եղբայրական» միացումը պէտք էր համարել ամենամեծ ապացոյցը, այն անսխալ չափանիշը, որ մի նոր, հզօր ոյժ հաւասարապէս վառնդ է սպառնում բոլոր ազգութիւնների կեղեքող դասակարգերին։

Եւ հզօր ոյժ—պրոլետարական յեղափոխութիւնն ընթանում էր այնպէս խրոխտ, որ բոլոր սև, անամօթ ոյժերը, ժամանակաւորապէս մոռացութեան տալով իրենց դժտութիւնները, շտապեցին իրար մօտ դալ՝ ընդհանուր թշնամի—բոլշեւիզմի դէմ մաքառելու համար։ Մինչ բոլշեւիզմը բոլն էր դրել բոլոր ժողովրդների հոգու և սրտի մէջ, բոլշեւիզմը հոսում էր անխտիր բոլոր ազդերի աշխատաւոր դասակարգերի երակներով և կազմում մի սքանչելի ներդաշնակութիւն նրանց ազատագրութեան համար մղած կռիւ։

Պրոլետարիատի միջազգային բանակին, Կարմիր Խնտէրնացիոնալին բուրժուական շտապում էր հակադրել բոլոր ազգութեանց չախակալների, դալլերի ու բոբենների դաշնակցութիւնը—աշխատաւորների արիւնը ծծող վերին դասակարգերի սև ինտերնացիոնալը։

Մենշեւիկները-դաշնակցականներն ու մուսաֆաթիստները դիւագաղար էին եղել, զգալով իրենց ժամանակ կորուստը, զոբժում էին անդադար, գիշեր ու ցերեկ։ Սպառնալից բնոյթ

ժաւալ ընդունող պրոլէտարական շարժման առաջ նրանք շտապում էին հանել իրենց «մթացած ուժերը»...

Պրոլէտարական յեղափոխութեան մէկ փրոնտին նրանք փուտիկոտ հակադրում էին բուրժուական բէկական բլոկը...

Բանւոր դասակարգի հերոսական կուռ դեկտաբ — Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը հաշուի պէտք է առնէր, անշուշտ, բուրժուազիայի շատ պատրաստութիւնները, պէտք է խորանար դահավիժօրէն սպացող իրերի ընթացքի մէջ։

Կոմունիստական կուսակցութիւնն, իր հերթին, պէտք է, ուելի քան երբ և իցէ, շտապէր զօրանուաքի ենթարկել և համապատասխան կերպով դասաւորել իր մարտական ուժերը, — նենդամիտ թշնամու դէմ —

Անակնկալ ու զօրեղ հարուածով մթանգամ ընդ միշտ յարդ ու փշուր անելու նրա, անամօթ բուրժուազիայի փարձկան գնդերը։

Եւ Արմենիայի երիտասարդ բոլշեւիկները — Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը, տեսական ըմբռնումների հետ երևան է բերել նաև քաղաքացիական կուռ ռազմական հոտառութիւն։

Դասաւորելով «Կարմիր Բանակի» յեղափոխական գնդերը հակայեղափոխութեան — մենշեւիզմի ռազմարան - արսենալի շուրջը և տալով նրանց հրահանգ պատրաստ լինելու միռական ժամին — Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան Անդրկովկասեան կազմակերպութեան ազգանշանի հետ շշմեցնող հարուածով տապալելու սէրմը...

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը, իր կենտրոնական օրգան «Կարմիր Օրերի» (հայ մենշեւիկ-պալբարականներին գնոսսներով և վրայ մենշեւիկների նեռքին գործոց «մինիստր» Ռամիշվիլու ձեռքով) փակելուց յետոյ, «Կարմիր Դրոշակի» 1918 № 8-ի մէջ կոչ է անում ժողովրդական լայն մասսաներին.

...«Պէտք է վճռական կռիւ մղել ու տապալել Անդրկովկասի հակայեղափոխութեան բոյն՝ սէյմը։ պէտք է սրբել նրա թխած բոլոր կառավարութիւնները։ Պէտք է իշխանութիւնն ամիջապէս ստանձնեն բանւորա-գիւղացիական խորհուրդները։ Ուրիշ ելք չկայ։

«Յեղափոխութիւնը վտանգի մէջ է։ Պէտք է փրկել։ եթէ չենք ուզում պատմութեան նախատինքին արժանանալ և մեր ընկերների թափուելիք արեան ծովը մեր վզին առնել։

«Ուշանալը չանցանք է, տարտամութիւնը՝ ոճիր։ պէտք է ամիջապէս խորտակել Անդրկովկասի սէյմը...

... «Ուրիշ ելք չկայ»։

Կուսակցութեան կենտրոնական օրգան «Կարմիր Դրօշակը» աշխատաւորական ամենալայն մասսաներին բացարձակ ուղղելով իր անվախ, կրակոտ կոչերը, միաժամանակ սուբ կերպով խարազանել է վարանող ու թուլամորթ այն ընկերներին, որոնք դեռ ևս դուրս չեն եկել իրենց «ինտէլիգէնտական» փափուկ կաշուից...

Խօսքից դէպի ակտիվ քայլերի հրաւիրելով մասսաներին, «Կամիր Դրօշակը» 1918 թ. ապրիլի 16-ի իր ընդարձակ «Դէպի գործ» առաջնորդողում շատ տեղին և իրաւամբ ասում է.

... «... Մեր վախկոտ թուլասրտութեամբ, մեր երերումներով ու տատանումներով մենք վնասել, խանգարել ու թերևս դաւաճանել ենք այն մեծ գործին, որի համար հոսում է Ռուսաստանում մեր բախտակիցների արիւնը գետերով։

«Երբ այնտեղ, բարիկատների վրայ, ներքին և արտաքին թշնամիների՝ կազմակերպուած իմպէրիալիստների անխնա ու շեշտակի հարուածների տակ արնակոլոլ մնկը մեսի յեռևից ընկնում են բանւորները ու չքաւոր գիւղացիները, Մեծ Յեղափոխութեան տենչով բռնկուած, փայփայած ու սիրած կոմունիստական կարգերի յաղթական գալստեան աւետարեր

շուշի բերաններին—մենք բար սառնասրտությամբ, հանգիստաբար պատապարանի դերում ոգևորում, խոսում, ճառում և առանց խղճի խայթ զսպու վայելում ենք նրանց նուաճումները»։

Վշտահար շեշտելով այս գաղն ճշմարտություններ, «Կարմիր Դրոշակը» ուրիշնով ու հաստատով լի նոյն առաջնորդողի մէջ կոչ է անում տարատեսներին.

... «Այսօր... երբ դարձեալ հիւսիսը... Մանուկ Յեղափոխական Ֆիւսիսը գալիս է իր յաղթական նուաճումներով, մենք... պէտք է համարձակ ասպարէզ իջնենք իսկական յեղափոխականի պէս, պէտք է կուրծք տանք մեր դէմ ծառացած ներքին և արտաքին թշնամիներին...

... «Բաւական է... հեռո՛ւ վարանումներ, հեռու վախք և երկչոտութիւնը...

... «Դէպի դո՞ւրս, դէպի յեղափոխական մարտի դաշտ, այնտե՛ղ, ուր կռիւն է եռում, կոմունիզմի և իմպէրիալիզմի կատաղի կռիւը...

... «Դէպի կռի՛ւ, մեզ հետ են բոլոր երկրների, բոլոր ճնշուած, հարստահարուած, կապիտալիզմի ճիրաններում արիւնաքամ եղած պրոլէտարները, մեզ հետ է կենսունակ, մաքուր պրոլէտարական 3-րդ Ինտէրնացիոնալը։

«Դէպի կռի՛ւ, ահա Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան նշանաբանը»։

VII.

Անձնուէր պայքար մղելով բոլոր նացիոնալիստական, դեղին—սոցիալիստական կուսակցությունների դէմ, Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը ձգտել է ամենասերտ կապեր հաստատել Ռուսաստանի բոլշևիկեան կուսակցության Անդրիովկասեան կազմակերպությունների հետ, իւրաքանչիւր անգամ ու ամեն տեղ ողջունելով ու շեշտելով

այն ակտիվ քայլերը, որոնք տեղի են ունեցել բոլշևիկ ընկերների կողմից Անդրկովկասի մոտ ու մասայլ իրականության մեջ։

Բուստանի Կոմունիստական Կուսակցության ընկերների ամեն անգամ հանդես գալը, նրանց յեղափոխական խօսքն ու գործական քայլը միշտ բերկրանքով են լցրել Հայաստանի բոլշևիկների հոգին և նոր թափով մղել Արմենիայի Կոմունիստներին զէպի քաղաքացիական կռիւը, զէպի յաղթանակը, որի անդրանիկ ու զեղեցիկ պտուղը հանդիսացաւ Անդրկովկասում, կարմիր, հերոսական Բագուն, Բագուի ոգեշունչ պրոլետարիատ։

Բագուն, Անդրկովկասի պրոլետարական ցինարը, դեռ ևս անցեալներում հակադրական դեր է կատարել բանւորական շարժման մեջ ընդհանրապէս և անկասկած 18 թ.-ի Խորհրդային Իշխանության հաստատումով փառաւոր էջ է կազմում համաշխարհային սոցիալիստական յեղափոխության պատմության մեջ։

Բագուի հերոսական կուսով, բանւորների արեամբ ձեռք բերուած յաղթանակներով թուղթ էին առնում բոլոր նշանաբիր կոմունիստների սրտերը։

Խորհրդային Բագուն այն անշէջ հրդեհն էր, որի բոցերով լուսաւորում էին Անդրկովկասի մութ հորիզոնները, որի յաղթական քայլերով աշխատաւորները ոտքի էին ելնում գուռդագունդ։

Բագուն Խորհրդային Իշխանության ազնիւ ամրոցն էր, Անդրկովկասի բանւորա-գիւղացիական մասսաների դեկավարը, սոցիալիստական յեղափոխության ուսուցիչը։

Եւ Բագուի բոլշևիկ ընկերները, պատիւ նրանց ու խոր յարգանք անմոռաց նահատակների լիշատակին, անզուգական Ստեփան Շահումեանի դեկավարությամբ անձնուէր ու հերոսական ոտքան յեղափոխական սոցիալիստական գործը, բնեռեցին իրենց վրա ամենի ուշադրությունը, ուկի ու

աւելի բարբարելով կամաւորական լեգափոխութեան հրդեհը Անդրկովկասի ու Հայաստանի աշխատաւոր մասսաների մէջ։

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը հիացմունքով հետեւում էր իրերի զարգացման ընթացքին Բաքուում։ Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը երբեմն էր անդրադառնան ընթանալ Բաքուի բոլշեւիկ ընկերների լեգափոխական ցուցմունքներով և նրանց ընդդէմ ճշմարիտ կոմունիստական ուղիով,

Եւ այն ժամանակ, երբ Բաքուն իր անվեհեր կռիւ մէջ մնացել էր միայնակ, բայց բմբռան ու հպարտ, չորս կողմից շրջապատուած թշնամի ու ապանութիւնների սիրահար հակալեգափոխական աւազակախմբերով, երբ մինչև իսկ բոլշեւիկների Կովկասի Երկրային Կոմիտէն այդ եզակի օրերում, կարուած Անդրկովկասի լեգափոխութեան կենտրոն Բաքուից, զուսարուած Թիֆլիզում, զլացաւ նոյն իսկ ընկերական, կոմունիստական ողջոյններ ուղարկել Բաքուին.

Միակ Հայաստանի Կոմունիստական կուսակցութիւնն էր, որ մի կողմ շպռտելով բոլոր «փափկանկատութիւնները», «ինչ ինչ պատճառներ», շիտակ ու անկեղծ՝ հրապարակով ասաց իր լարգանքի ու հիացմունքի խօսքը։

«Կարմիր Դրօշակի» № 2-ում 1918 թ. ապրիլի 16-ին Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան «Ողջո՜յն Կարմիր Բաքուին» պաշտօնական լայտարարութեան մէջ կրկարդում.

«Ահա երկրորդ շաբաթն է, որ Բաքուի լեգափոխական բանուորութիւնն ու զինուորութիւնը ծառացած Անդրկովկասեան հակալեգափոխութեան դէմ, հերոսական ճակատամարտներ են տալիս»։

«... Բաքուն, Անդրկովկասի այդ արդիւնաբերական ու բանուորական կենտրոնը, ճանաչելով Ժողովրդական Կոմիսարների Իշխանութիւնը, Անդրկովկասեան մութ ու մայլ հարիզոնի համար մի լեգափոխական փարոս դարձաւ և քանի Անդրկովկասը իր բեկերի ու կեղծ սոցիալիստ դեկավար-

ներբ շնորհիւ գլխուում էր հակայեղափոխութեան գիրկը ու մթնանում, նոյնքան Բագուն աւելի ու աւելի յեղափոխականանում, աւելի ու աւելի բոցավառուում էր»։

«...Անդրկովկասեան բէգերն ու իրանց պաշտօնակից սոցիալ-շովինիստ մէնշեւիկներն ու դաշնակցականները, որպէսզի իրենց փափուկ բազկաթոռները հաստատուն պահեն, Անդրկովկասը անկախ յայտարարեցին ու Ռուսաստանից պատնէշով անջատեցին»...

Որովհետև նրանք քաջ գիտէին, որ Բագուից յեղափոխական ալիքները—

«...Մաւալելու են ամբողջ Անդրկովկասի վրա և մահացու հարուած են հասցնելու իրենց սիրաշաւութեանը»։

Ուստի նրանք բոլոր միջոցները պէտք է ձեռք առնէին կղզիացնելու Բագուն։

«...Անմիջապէս քանդեցին ու աւերեցին Բագուից Թիֆլիս տանող բոլոր նաւապարհներն ու երկաթուղագծերը, և այդ նաւապարհների ամբողջ երկարութեամբ դրուեցին պահապան աւազակախմբեր՝ կէնարալ գարձնելով Դանձակը...»

Եւ մէնշեւիկները, դաշնակցականներն ու մաւսաֆաթիստները մտորում էին գիւղական ծարդրներ ու լարում դաւադրութիւններ Բագուի դէմ, որովհետև գանազան վայրերում ազրարային շարժումներ էին սկսուած, որովհետև գարաւոր ստրկութիւնից արթնացած գիւղացիութիւնը պահանջներ էր ներկայացնում, և աշխատաւոր մասսաներն այստեղ ու այնտեղ ապստամբութեան դրօշն էին բարձրացնում։

«...Չէ որ Բագուն էր այդ բոլոր շարժումների ծնունդը. այդ կարմիր Բագուի կարդերն էին, որ այստեղ ու այնտեղ յեղափոխական հրդեհներ էին առաջացնում...»

«...Բագուն իր տանջեակ հաղարաւոր կազմակերպած ու յեղափոխական բանւորութեամբ մի պատկառելի ոյժ էր, որի հետ խօսելը այնքան էլ հեշտ չէր. պէտք էր սպասել յարմար առիթի...»

Առիթը ներկայացաւ և կռիւը սկսեց. Բաքուի պրոլետարիատը քանիցս յաղթական դուրս եկաւ այդ անհաւասար պայքարից։

«...Եւ ներկայումս, երբ ծի քանի ճակատամարտներից ու յաղթութիւններից յետոյ Բաքուի բանւորութիւնը ծառացած կանգնել է Անդրկովկասեան հակայեղափոխութեան դէմ. Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը իր ողջոյնի խօսքն է ուղղում Կարմիր Բաքուի յեղափոխական պրոլետարիատին և յայտնում նրան, որ նա իր հերոսական կուռւում մենակ չի մնա...»

Ապագա պատմագիրը կանգ առնելով Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան գործունէութեան վրա, անշուշտ, կաքանագրի, թէ ինչպէս երիտասարդ կուսակցութիւնն այդ օրերում ամէն կերպ մտորել է ու ձգտել՝ խորտակած տեսնել Թիֆլիզում կազմած Անդրկովկասեան Սէյմը, և թէ ինչպէս մեր կուսակցութիւնը ծրագրում էր Դանձակի վրայով կամ լեռներով օգնական ուժեր հասցնել Բաքուին...

Թողնելով մի այլ առիթի անդրադառնալ ու կանգ առնել Հայաստանի բոլշևիկների գործնական քայլերի և նրանց վիժման պատճառների վրա, այժմ արժէ նմանապէս արձանագրել այստեղ Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Թիֆլիզի քնդհանուր ժողովի բէզոլիւցիան, որ տպւած է 1918 թ. «Կարմիր Դրօշակի» № 8-ում.

«...Ի նկատի ունենալով, որ Անդրկովկասի հակայեղափոխական մութ ուժերի՝ բուրժուա-բէգական կառավարութեան վարած ոճրագործ քաղաքականութեան շնորհիւ Անդրկովկասն այսօր կանգնած է թիւրք հորդաների սրարշաւ քնթացքի սպառնալիքի հանդէպ»։

«Որ այդ կառավարութիւնը, բաժանուելով Ռուսական Մեծ Յեղափոխութիւնից չլսաւել է յեղափոխական դէմոկրատիայի ուժերը և կործանել նրա յեղափոխական զորքը, զօրացնելով

բեղական-բուրժուական աւազակախմբերի գործունէութիւնը, աւերի և հրդեհի մատնելով ամբողջ Անդրկովկասը։

«...Որ յեղափոխական Բագուն, ուր վերուեց Անդրկովկասի յեղափոխութեան բաղդը, այսօր յաղթական առաջ է շարժուում...»

«...Որ քանի շարունակում է իշխել երկրի վրա Անդրկովկասի հակայեղափոխական Սէյմը և քանի չի հաստատուել Խորհուրդների Իշխանութիւնը, որը միակ դրաւականը և հաւատարիմ դաշնակիցն է Հայաստանի ճնշուած ժողովուրդների սրբազան դատի»—

Հայաստանի Կոմունիստական կուսակցութիւնն իր ընկերական ողջոյններն ուղղելով Բագուի Կարմիր պրոլետարիատին յայտարարում է, որ նա դէնքը ձեռքից վայր չի դնի, մինչև որ Անդրկովկասում չհաստատուի բանուորա-գիւղացիական Խորհուրդների Իշխանութիւնը»։

VIII

Բանուորա-գիւղացիական Խորհուրդների Իշխանութիւնը և նրա հետ միասին Արմենիայի բոլշևիկների երիտասարդ կուսակցութիւնը, հակայեղափոխականների դէմ մղած անհաւասար կռիւի մէջ ստիպուած էր ժամանակաւորապէս տեղի տալ, կազդուրելու իր շարքերը և աւելի եռանդուն ու նոր թափով գործի դիմելու։

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան յեղափոխական-պրոլետարական առաջին կարճատև աշխատանքին, չանցած երկար ժամանակ, յաջորդում է երկրորդ, նո՛յն, հերոսական կոմունիստական գործունէութիւնը,

Նոր ոգեորոյ. էլ աւելի փայլուն հեռանկարներով։

Կուսակցութեան տարեւարձը, Հայաստ. Կոմուն. Կուս. Կէնտր. Կոմիտէն ստեղծեց ամենագեղեցիկ, անջնջելի յուշերով, այն է 1919 թ. մարտի 4-ին, հինաւուրց Կրէմլի մէջ, Մոսկ-

ւալում, մասնակցելով Երրորդ, Կոմունիստական Ինտերնացիոնալի Առաջին Կոնգրեսին։

Երգելով մինչև վերջին կաթիլ արիւնը կռիւ մղել անգլո-ամերիկական իմպերիալիստների դէմ, խորտակել բուրժուական-կալուածատիրական կարգերը Հայաստանում, մեր կուսակցութիւնը այդպիսով սահմանեալ է անչափ ժամանակ, բայց քաղաքական պարտականութիւն։

Հաստատելով անսասան, որ Արևմուտքի և Արևելքի կոմունիստական շարժումների հետ, պրոլետարական յեղափոխութեան հրդեհով պիտի բռնկի նաև Հայաստանը։—

Արմենիայի բոլշևիկների Կենտրոնական Կոմիտէն 1919 թ. մայիսի 1-ի դեկլարացիայի մէջ ասում է.

...«Վերջնական ու վճռական կռիւի դանդը հնչում է արդէն։

«Անգլո-ամերիկական իմպերիալիստների և նրանց վարձկանների անարգ լծի տակ հեծեծում են դառնօրէն Հայաստանի ժողովուրդները։

«Աշխատաւոր դասակարգերի կրծքից, որ վրէժի և ցասումի հրով է լցուած, յեղափոխական ալիքները օրէ օր բարձրանում են յեռնացած։

«Կոմունիստական Կուսակցութիւնը Հայաստանում պիտի ղեկավարի մասսական շարժումը։

«Հայաստանի կոմունիստնե՛ր, դէպի նիւթական աշխատանք։ Հայաստանի կոմունիստնե՛ր, դէպի կուսակցական շարքերը։

«Ուշանալը այսօր—յանցանք է։ Ուշանալը, անշուշտ, դաւանութիւն է Հայաստանի աշխատաւոր մասսաների հանդէպ։

«Ընկերնե՛ր, դէպի համբերաշխ աշխատանք։

«Ընկերնե՛ր. դէպի Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան շարքերը։

«Ինտերնացիոնալի յաղթական հիմնի նուագների տակ մենք գնանք առա՛ջ»։

ЗКП1(47.925)
2-26

Կուսակցութեան կոչը արձագանք է գտնում կոմունիստական երիտասարդ հոգիների մէջ։

Եբիտասարդ ուժերը, անխախտ հաւատով ու անձնուէր, վարում են դէպի յեղափոխական աշխատանք։

Խորհրդային Ռուսաստանի հուժկու նաւագների հետ մենք կերթանք առաջ—

Դէպի յաղթանակ։

Կոմունիստական Ինտերնացիոնալի Կարմիր Դրօշակի տակ կը քայլենք անշեղ.—

Դէպի Կոմունիզմ։

Մեկ օրինակ